Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-642-24.07.2023-ՏՀ-011/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-143-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենքի) 13-րդ հոդվածի 8-րդ մասի 4-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Օրենքի 16-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հոդված 16. Սահմանային պետական վերահսկողության շրջանակներում ներմուծվող սննդամթերքի նմուշառման և լաբորատոր փորձարկումների իրականացման կարգը

1. Սահմանային պետական վերահսկողության շրջանակներում ներմուծվող սննդամթերքի նմուշառումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված դեպքերում և կարգով:

2. Սննդամթերքի նմուշառումը և լաբորատոր փորձարկումներն իրականացվում են ապրանքը տնօրինողի կողմից ընտրված Եվրասիական տնտեսական միության սերտիֆիկացման մարմինների և փորձարկման լաբորատորիաների միասնական ռեեստրում ներառված ու Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխան նշանակված Հայաստանի Հանրապետության համապատասխանության գնահատման մարմնի (այսուհետ՝ Գնահատման մարմին) կողմից:

3. Գնահատման մարմնի կողմից նմուշառումն իրականացվում է սահմանային պետական վերահսկողություն իրականացնող պաշտոնատար անձի ներկայությամբ և փորձարկման է ներկայացվում Լիազոր մարմնի ուղեկցող նամակով:

4. Նմուշառման արդյունքում խմբաքանակից առանձնացվում է պահեստային նմուշ, որը կապարակնքվում կամ դրոշմակնքվում և ի պահ է հանձնվում Լիազոր մարմնին: Պահեստային նմուշը պահվում է տվյալ ապրանքի համար նախատեսված համապատասխան պահման պայմաններում:

5. Պահեստային նմուշը փորձարկման է ներկայացվում Լիազոր մարմնի կողմից՝ ուղեկցող նամակով:

6. Նմուշի տեղափոխման և փորձարկման ծախսերը կատարվում են ապրանքը տնօրինողի հաշվին:

7. Մինչև Հայաստանի Հանրապետությունում ազգային ռեֆերենս լաբորատորիայի նշանակումը՝ լաբորատոր փորձարկումների արդյունքների հետ համաձայն չլինելու դեպքում ապրանքը տնօրինողը, իր միջոցների հաշվին, պահեստային նմուշն ուղարկվում է այլ պետության ռեֆերենս փորձարկման լաբորատորիա՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված ցանկի համաձայն, որի պատասխանը համարվում է վերջնական:

8. Մինչև Հայաստանի Հանրապետությունում ազգային ռեֆերենս լաբորատորիայի նշանակումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված դեպքերում և կարգով Լիազոր մարմինը պետական բյուջեի միջոցների հաշվին պահեստային նմուշը կարող է ուղարկել այլ պետության ռեֆերենս փորձարկման լաբորատորիա:

9. Ռեֆերենս լաբորատորիայում իրականացված փորձարկման արդյունքների հիման վրա մեկ տարվա ընթացքում անհամապատասխանության 2 դեպք արձանագրելու դեպքում կասեցվում է Գնահատման մարմնի հավատարմագրումը և օրենսդրության համաձայն իրականացվում են ստուգումներ:

10. Երկու տարի անընդմեջ անհամապատասխանությունների կրկնության դեպքում՝ օրենսդրության համաձայն, Գնահատման մարմնի հավատարմագրումը դադարեցվում է:

11. Ռեֆերենս լաբորատորիայի կողմից իրականացված փորձարկման արդյունքների հիման վրա անհամապատասխանությունների արձանագրման դեպքում Գնահատման մարմինը հատուցում է ռեֆերենս լաբորատորիայի փորձարկման հետ կապված ծախսերը:»:

Հոդված 3. Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասը «նշանակվում է» բառից հետո լրացնել «պետական լաբորատորիա՝» բառերը:

Հոդված 4. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքի 2-րդ հոդվածում նշված այլ պետության ռեֆերենս փորձարկման լաբորատորիայում փորձարկում իրականացնելու վերաբերյալ իրավակարգավորումները գործում են մինչև Հայաստանի Հանրապետությունում ազգային ռեֆերենս լաբորատորիայի նշանակումը, որից հետո բողոքարկումն իրականացվում է ազգային ռեֆերենս լաբորատորիայում:

3. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկամսյա ժամկետում:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

~~*Առաջին ընթերցում*~~

Երկրորդ ընթերցում

Կ-642-24.07.2023-ՏՀ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-143-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենքի) 13-րդ հոդվածի 8-րդ մասի 4-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Օրենքի 16-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հոդված 16. Սահմանային պետական վերահսկողության շրջանակներում ներմուծվող սննդամթերքի նմուշառման և լաբորատոր փորձարկումների իրականացման կարգը

1. Սահմանային պետական վերահսկողության շրջանակներում ներմուծվող սննդամթերքի նմուշառումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված դեպքերում և կարգով:

2. Սննդամթերքի նմուշառումը և լաբորատոր փորձարկումներն իրականացվում են ապրանքը տնօրինողի կողմից ընտրված Եվրասիական տնտեսական միության սերտիֆիկացման մարմինների և փորձարկման լաբորատորիաների միասնական ռեեստրում ներառված ու Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխան նշանակված Հայաստանի Հանրապետության համապատասխանության գնահատման մարմնի (այսուհետ՝ Գնահատման մարմին) կողմից:

3. Գնահատման մարմնի կողմից նմուշառումն իրականացվում է սահմանային պետական վերահսկողություն իրականացնող պաշտոնատար անձի ներկայությամբ և փորձարկման է ներկայացվում Լիազոր մարմնի ուղեկցող նամակով:

4. Նմուշառման արդյունքում խմբաքանակից առանձնացվում է պահեստային նմուշ, որը կապարակնքվում կամ դրոշմակնքվում և ի պահ է հանձնվում Լիազոր

մարմնին: Պահեստային նմուշը պահվում է տվյալ ապրանքի համար նախատեսված համապատասխան պահման պայմաններում:

5. Պահեստային նմուշը փորձարկման է ներկայացվում Լիազոր մարմնի կողմից՝ ուղեկցող նամակով:

6. Նմուշի տեղափոխման և փորձարկման ծախսերը կատարվում են ապրանքը տնօրինողի հաշվին:

7. Մինչև Հայաստանի Հանրապետությունում ազգային ռեֆերենս լաբորատորիայի նշանակումը՝ լաբորատոր փորձարկումների արդյունքների հետ համաձայն չլինելու դեպքում ապրանքը տնօրինողը, իր միջոցների հաշվին, պահեստային նմուշն ուղարկվում է այլ պետության ռեֆերենս փորձարկման լաբորատորիա՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված ցանկի համաձայն, որի պատասխանը համարվում է վերջնական:

8. Մինչև Հայաստանի Հանրապետությունում ազգային ռեֆերենս լաբորատորիայի նշանակումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված դեպքերում և կարգով Լիազոր մարմինը պետական բյուջեի միջոցների հաշվին պահեստային նմուշը կարող է ուղարկել այլ պետության ռեֆերենս փորձարկման լաբորատորիա:

9. Ռեֆերենս լաբորատորիայում իրականացված փորձարկման արդյունքների հիման վրա մեկ տարվա ընթացքում անհամապատասխանության 2 դեպք արձանագրելու դեպքում կասեցվում է Գնահատման մարմնի հավատարմագրումը և օրենսդրության համաձայն իրականացվում են ստուգումներ:

10. Երկու տարի անընդմեջ անհամապատասխանությունների կրկնության դեպքում՝ օրենսդրության համաձայն, Գնահատման մարմնի հավատարմագրումը դադարեցվում է:

11. Ռեֆերենս լաբորատորիայի կողմից իրականացված փորձարկման արդյունքների հիման վրա անհամապատասխանությունների արձանագրման դեպքում Գնահատման մարմինը հատուցում է ռեֆերենս լաբորատորիայի փորձարկման հետ կապված ծախսերը:»:

Հոդված 3. Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասը «նշանակվում է» բառից հետո լրացնել «պետական լաբորատորիա՝» բառերը:

Հոդված 4. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքի 2-րդ հոդվածում նշված այլ պետության ռեֆերենս փորձարկման լաբորատորիայում փորձարկում իրականացնելու վերաբերյալ իրավակարգավորումները գործում են մինչև Հայաստանի Հանրապետությունում

ազգային ռեֆերենս լաբորատորիայի նշանակումը, որից հետո բողոքարկումն իրականացվում է ազգային ռեֆերենս լաբորատորիայում:

3. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկամսյա ժամկետում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (*Կ-642-24.07.2023-ՏՀ-011/1*) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 16-րդ հոդվածի վերնագրում «սննդամթերքի» բառից հետո լրացնել «նմուշառման և» բառերով՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջի պահպանման նկատառումից ելնելով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:
2.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի 4-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասում «Սույն օրենքն ուժի մեջ է» բառերից հետո ավելացնել «մտնում» բառը, ղեկավարվելով	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան	Ընդունվել է:

			«Նորմատիվ իրավական ակտերի մասին» 23-րդ հոդվածի դրույթներով, իսկ նույն հոդվածի 2-րդ մասում նշված «իրականացվում» բառը փոխարինել «իրականացվում է» բառերով:	փոփոխությունը:	
3.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի 4-րդ հոդված	Նախագծով սահմանել Նախագծից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման նախատեսվող ժամկետները՝ համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի: Ըստ այդմ Նախագծի 13-րդ հոդվածը շարադրել նոր 3-րդ կետով հետևյալ խմբագրությամբ՝ «3. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկամսյա ժամկետում:»	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է: